ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2018 թվականի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII՝ դասարանի ծնողական ժողովը:Ծնողական ժողովին ներկա էին բոլոր ծնողները:Այն վարում էր դասղեկ Ար. Դավթյանը:

Օրակարգում՝

1.Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրությունը:

2.Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

3.Ընթացիկ հարցեր/կարգապահություն,հերթապահություն,ռեժիմ/:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ար.Դավթյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել VII՝ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն.

1. Հարությունյան Աստղիկ
2. Գինոսյան Գոհար
3. Աբելյան Լուսինե
4. Ասատրյան Իսկուհի
5. Աբրահամյան Նունե

Նախագահի թեկնածու առաջադրվեց Աստղիկ Հարությունյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Աստղիկ Հարությունյանը:

Որոշեցին.

VII՝ դասարանում ձևավորել ծնողական խորհրդի հետևյալ կազմը.

1.Հարությունյան Աստղիկ/նախագահ/
2.Գինոսյան Գոհար/անդամ/
3.Աբելյան Լուսինե/անդամ/
4.Ասատրյան Իսկուհի/անդամ/

5.Աբրահամյան Նունե/անդամ/

2. Լսեցին. - Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքների իրականացման հարցը:

Դասղեկ Ար.Դավթյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար:Ուսուցիչներին և դասղեկներին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր, օրագրեր, գրենական պիտույքներ, ժամանակին վճարել վարձավճարները:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռքբերելու անհրաժեշտ տետրեր, օրագրեր, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը, որը պետք է կազմակերպի ծնողական խորհուրդը՝ համագործակցելով գրադարանավարի հետ:

3. Լսեցին. - Ընթացիկ հարցեր /կարգապահություն,հերթապահություն,ռեժիմ/:

Դասղեկ Ար.Դավթյանը նշեց, որ դասերը սկսվելու են 9^{00}-ին, ավարտվելու են 15^{00}-ին:Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին, անհրաժեշտ պարագաներով/դասագիրք, օրագիր, տետր/, համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Աստղիկ Հարությունյան/

Քարտուղար՝ /Լուսինե Աբելյան/